ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը, ազգանունը:** Քրիստինե Ասատրյան
2. **Զբաղեցրած պաշտոնը:** ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
3. **Գործուղման վայրը և ժամկետները:** Լեհաստանի Հանրապետություն (Նովի Սաչ), սեպտեմբերի 4-6
4. **Հրավիրող կողմը:**
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը):** Գործուղման նպատակն է մասնակցել Երիտասարդ առաջնորդների տնտեսական 13-րդ ֆորումին
6. **Քննարկված թեմաները:** կրթական հիմնախնդիրները և նորարական տեխնոլոգիաները երիտասարդության համար հնարավորությունների համատեքստում:
7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը:**

   - Աշխատանքային գործուղման ընթացքում հանդիպումներ ունեցա Ուկրաինայի Հանրապետության Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Յարեմա Ալեքսանդրի հետ: Քննարկեցինք հնարավոր համագործակցության տարբերակները երիտասարդական քաղաքականության ոլորտում:
   - Հանդիպել եմ Քեմբրիջի նորարարական կենտրոնի գործադիր տնօրեն Ստաս Գայշանի հետ, որի հետ նախնական քննարկել ենք հնարավոր համագործակցության եզրերի մեասին:
   - «Կրթություն 4.0 - նոր հնարավորություններ երիտասարդների համար» պանել-քննարկման շրջանակներում Եվրոպայի 42 երկրներից ժամանած 300 երիտասարդների ներկայացվեց Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականության առաջնահերթությունները, ոչ

ֆորմալ կրթության դերը երիտասարդական գործազրկության խնդիրները լուծելու և ֆորմալ կրթության բացերը լրացնելու միջոցները ոչ ֆորմալ կրթության միջոցով: Պանել քննարկմանը մասնակցում էին Լեհաստանի Հանրապետության կրթության նախարարը, Կրթական համակարգի և զարգացման հիմնադրամի ղեկավարը, Քեմբրիջի նորարարական կենտրոնի գործադիր տնօրենը:

- Քննարկումների արդյունքում ծանոթացել եմ երիտասարդության քաղաքականության ոլորտում այլ պետությունների ունեցած փորձին և նշված ոլորտում իրականացվող ծրագրերին:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:** Չկան
9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:** Չկան
10. **Գործուղվողը:** Քրիստինե Ասատրյան
11. **Ստորագրությունը, ամսաթիվը.** 11.09.2018